

COVID-19-ը և աշխատանքի առողջությունն ու անվտանգությունը – Շինություն և շինարարություն

Ըստ Աշխատանքի առողջության և անվտանգության մոդելային օրենքների, գործատուները զգուշության պարտականություն ունեն իրենց աշխատողների և ուրիշների առողջության և անվտանգության համար աշխատավայրում: Որպես գործատու, դուք պետք է բացահայտեք վտանգները աշխատավայրում և, եթե հնարավոր է, վերացնեք կամ նվազեցնեք այդ վտանգները:

Դուք պետք է խորհրդակցեք աշխատողների հետ COVID-19-ին առնչվող առողջության և անվտանգության հարցերի վերաբերյալ: Թույլ տվեք աշխատողներին արտահայտել իրենց կարծիքները մինչև ձեր որոշում կայացնելը:

Ֆիզիկական հեռավորություն

Դուք պետք է հնարավոր ամեն ինչ անեք, որպեսզի պահեք աշխատողներին միմյանցից 1.5 մետր հեռու:

- սահմանափակեք ֆիզիկական շփումները – հաղորդակցվեք՝ օգտագործելով այլ միջոցներ, օրինակ՝ հեռախոս կամ ձայնասփյուռ
- սահմանափակեք աշխատողների թիվը աշխատավայրում
- բաժանեք աշխատանքը առավոտյան և կեսօրյա հերթափոխումների
- նվազեցրեք օրվա ընթացքում կատարվելիք առաջադրանքների թիվը
- թույլատրեք աշխատանք տնից, եթե հնարավոր է
- ստեղծեք քայլուղիներ աշխատավայրում՝ պահպանելու ֆիզիկական առանձնացումը
- նվազեցրեք աշխատողների թիվը որևէ տարածքում նույն ժամանակ, ներառյալ ճաշի և ընդմիջման ժամերը և տեղադրեք կահույքը իրարից հեռու ճաշելու սենյակներում
- հանդիպումներ անցկացրեք առցանց, եթե հնարավոր է, իսկ եթե ոչ, ապա անցկացրեք հանդիպումները բաց տարածքներում և պահեք աշխատողներին առնվազն 1.5 մետր միմյանցից հեռու
- հետաձգեք ոչ կարևոր պարապմունքները
- տեղադրեք ցուցանականներ ֆիզիկական հեռավորության մասին աշխատավայրի տարածքում:

Դուք պետք է կառավարեք առողջության և անվտանգության ցանկացած վտանգ (օրինակ՝ ազդեցությունը հաղորդակցության վրա), որը տեղի է ունենում ֆիզիկական հեռավորության հետևանքով:

Առողջության ստուգումներ և մեկուսացում

Վերահսկեք ձեր աշխատողներին COVID-19-ի ախտանիշների համար, օրինակ՝ ջերմ:

Կարգադրեք ձեր աշխատողներին, անկախ նրանք աշխատավայրում են, թե ոչ, որպեսզի ձեզ տեղեկացնեն, եթե իրենք:

- ունեն որևէ ախտանիշներ
- շփվել են որևէ մեկի հետ, ով կարող է COVID-19 ունենալ (նույնիսկ եթե անձը, ով հնարավոր է ունի COVID-19, դեռևս չի ստուգվել)
- նկատել են այլ աշխատողի, ով ախտանիշներ ունի

Դադարեցրեք աշխատողների աշխատանքը, եթե նրանք ցուցաբերում են ախտանիշներ:

Մաքրում

Հաճախակի մաքրեք լվացող նյութով կամ ախտահանիչով.

- հաճախակի դիպչող մակերեսները – սարքավորումները, վերելակները, ամբարձիչները, բազրիքները և դռները
- անձնական իրերը, օրինակ՝ բաժակները և հեռախոսները
- աշխատանքի իրերը, օրինակ՝ գործիքները
- աշխատավայրի հարմարությունները

Սովորեցրեք աշխատողներին մաքրել սարքավորումները օգտագործելուց անմիջապես առաջ:

Յուրաքանչյուրը, ով մաքրում է, պետք է.

- հանգնի ձեռնոցեր
- օգտագործի ակոհոլ պարունակող վարակազերծիչ ձեռքի համար՝ նախքան ձեռնոց հագնելը և հագնելուց հետո

Ունեցեք փակ աղբամաններ, որտեղ աշխատողները կարող են նետել թափոնները և աղբը, օրինակ՝ օգտագործված անձեռոցիկները:

Հիգիենա

Աշխատողները պարտավոր են պահպանել պատշաճ հիգիենա.

- հազը և փռշտոցը փակել արմունկով կամ անձեռոցիկով
- պատշաճորեն թափել անձեռոցիկները
- ձեռքերը հաճախ լվանալ օճառով և ջրով առնվազն 20 վայրկյան և չորացնել ամբողջովին, ներառյալ՝ նախքան ուտելը և ուտելուց հետո և գուգարան գնալուց հետո
- օգտագործել ակոհոլային հիմքով ախտահանիչներ ձեռքերի համար
- մանրակրկիտ լվանալ մարմինը, մազերը (ներառյալ դեմքի մազերը) և հագուստը ամեն օր
- գտնվել ավելի քան 1.5 մետր միմյանցից հեռու
- մնալ տանը, եթե հիվանդ են
- խուսափել դիպչել իրենց դեմքին
- խուսափել ձեռքսեղմումից և այլ մոտիկ ֆիզիկական շփումից
- խուսափել թքելուց
- ծխախոտի մնացորդը թափել աղբամանի մեջ

Ձեր լվացվելու սենյակների հարմարությունները պետք է լինեն մաքուր և ունենան օձառ, ջուր և գուգարանի թուղթ: Ունեցեք աշխատողների համար հասանելի ակոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչներ՝ օգտագործման համար:

Առաքումներ և այլ պայմանագրային աշխատողներ, ովքեր այցելում են աշխատավայր

Եթե աշխատավայր այցելությունները պարտադիր են, ապա.

- տվեք պարզ հրահանգներ ձեր պահանջների մասին, երբ նրանք աշխատավայրում են
- նվազեցրեք ներգրավված աշխատողների թիվը
- ունեցեք ակոհոլային հիմքով ձեռքի ախտահանիչներ օգտագործման համար առաքումներ կատարելուց հետո
- հրահանգեք այցելող բեռնատար վարորդներին մնալ բեռնատարների մեջ
- օգտագործեք և խնդրեք ուրիշներին էլ օգտագործել էլեկտրոնային թղթաբանություն և ստորագրության այլընտանքային միջոցներ

Հավելյալ տեղեկատվություն

- Աշխատանքի առողջության և անվտանգության վերաբերյալ տեղեկատվության համար՝ այցելեք [Safe Work Australia website](https://www.swa.gov.au/coronavirus)